https://www.trtworld.com/asia/azerbaijan-armenia-continue-to-clash-over-karabakh-40406

Azerbaijan, Armenia continue to clash over Karabakh

Ադրբեջանն ու Հայաստանը շարունակում են հակամարտել Ղարաբաղի պատճառով

Լեռնային Ղարաբաղի շուրջ հայկական և ադրբեջանական զորքերի միջև մարտերը վերսկսվել են ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանների հետ Ադրբեջանի գլխավոր դիվանագետի վճռորոշ հանդիպումից առաջ:

Նոր բախումներ են սկսվել Ադրբեջանի և Հայաստանի միջև բանակցություններից առաջ, որտեղ Միացյալ Նահանգները, Ֆրանսիան և Ռուսաստանը կքննարկեն, ինչպես ապահովել հրադադարը և կանխել լայնամասշտաբ պատերազմը Հարավային Կովկասում:

Ադրբեջանը հայտարարել է, որ հինգշաբթի օրը հայկական ուժերը գնդակոծել են նախկին ԽՍՀՄ հանրապետության տարածքում գտնվող Գյանջա քաղաքը:

Ասվում է, որ Ադրբեջանի Գորանբոյի շրջանում մեկ քաղաքացիական անձ է սպանվել, իսկ մյուս գյուղերն ու քաղաքները գնդակոծվել են հայ զինվորների կողմից:

Բաքուն հերքեց , որ իր զորքերը գնդակոծել են Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի պատմական տաճարը, ինչպես պնդում է Հայաստանը:

Շուշիի եկեղեցու վնասվելու մասին տեղեկությունը ոչ մի կապ չունի ադրբեջանական բանակի ռազմական գործողությունների հետ",-ասվում է Պաշտպանության նախարարության հայտարարության մեջ:

"Ի տարբերություն Հայաստանի Զինված ուժերի, ադրբեջանական բանակը նպատակաուղղված չէ թիրախավորելու պատմական, մշակութային կամ հատկապես կրոնական շենքերին ու հուշարձաններին : "

Մարտական գործողությունների մասին վերջին հաղորդումներից հետո Հայաստանը հայտարարել է, որ նախագահական հրամանագրով աշխատանքից ազատել է իր ազգային անվտանգության ծառայության ղեկավարին :

Կորուստների թիվը

Ադրբեջանի իշխանությունները հայտնել են, որ սեպտեմբերի 27-ից մինչ օրս զոհվել է 30 քաղաքացի, վիրավորվել է 143 մարդ, բայց չեն հայտնում տեղեկություններ ռազմական կորուստների մասին:

Հայերը հայտարարել են, որ իրենց 30 զինծառայողներ զոհվել են նոր բախումների ժամանակ, իսկ սեպտեմբերի 27-ից զոհված զինվորականների թիվը հասել է 350-ի: Դրանում ասվում էր, որ 19 խաղաղ բնակիչ է սպանվել,իսկ շատերը վիրավորվել են ։

Ադրբեջանի պաշտպանության նախարար Անար Էյվազովը հայտնել է , որ հինգշաբթի օրը ադրբեջանական հակաօդային պաշտպանության ստորաբաժանումների կողմից Հայաստանին պատկանող մեկ անօդաչու թռչող սարք է խոցվել, իսկ Հայաստանի ռազմական ենթակառուցվածքը և զինամթերքի պահեստները ենթարկվել են հրետանային գնդակոծության:

Նրա խոսքով ՝ ադրբեջանական բանակը ոչնչացրել է հայկական զինվորական շարասյունը ։ Տասը տանկ, վեց Դ-20 հաուբից, մեկ ինքնագնաց "ակացիա" հաուբից և Հայաստանին պատկանող 30 մեքենա ոչնչացվել են ճակատային գծի տարբեր հատվածներում, իսկ հայկական բանակի 1-ին և 7-րդ գնդերի զինվորները դիմել են փախուստի ։

Նրա խոսքով, հայկական զորքերը "Տոչկա-Ու" հրթիռային հարվածներ են հասցրել Գորանբոյ, Թարթառ, Աղդամ, Աղջաբեդի և Բարդա նահանգներին , ինչի հետևանքով մի քանի խաղաղ ադրբեջանցիներ են մահացել և վիրավորվել ։

Վճռորոշ հանդիպում Ռուսաստանում

Հինգշաբթի օրը Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը Ժնևում պետք է հանդիպեր Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի դիվանագետների հետ ։

Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները հրավիրվել են մասնակցելու ուրբաթ Մոսկվայում կայանալիք բանակցություններին, Կրեմլը մեջբերել է նախագահ Վլադիմիր Պուտինի խոսքերը ՝ հավելելով, որ հրավերը հաջորդել է երեք երկրների առաջնորդների զանգերին ։

"Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի միջև մի շարք հեռախոսազրույցներից հետո Ռուսաստանի նախագահը կոչ է արել դադարեցնել ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում",-ասված է հայտարարության մեջ:

Վաշինգտոնը, Փարիզը և Մոսկվան Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի

համանախագահներն են, որոնք միջնորդել են շուրջ տասնամյակներ տևած Լեռնային Ղարաբաղի հակամարտություններին:

Միջազգային իրավունքի համաձայն ՝ Հայաստանի կողմից գրավված Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին, սակայն այն գրավվել է հայերի կողմից 1991-1994թթ.պատերազմից հետո, որի արդյունքում զոհվել է շուրջ 30 000 մարդ ։

"Միացյալ Նահանգների դիրքորոշումը պարզ էր և փոփոխման ենթակա չէ .երկու կողմերը պետք է անհապաղ դադարեցնեն ռազմական գործողությունները և աշխատեն Մինսկի խմբի համանախագահների հետ, որպեսզի հնարավորինս շուտ վերադառնան առարկայական բանակցություններին",-հայտարարել է Ժնևում ԱՄՆ-ի ներկայացուցիչը:

Հետագա սրման մտավախությունները

Պատերազմող կողմերն անտեսում էին կրակի դադարեցման բազմաթիվ կոչերը, Իսկ ադրբեջանական և հայկական ղեկավարությունները տարակարծիք էին մարտական գործողությունների դադարեցման իրենց պայմանների շուրջ ։

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի գլխավոր պահանջն այն է, որ Հայաստանը սահմանի Լեռնային Ղարաբաղից և հարակից ադրբեջանական տարածքներից զորքերի դուրսբերման ժամանակացույցը, ինչպես նաև այն, որ Թուրքիան մասնակցի խաղաղարարությանը:

"Եվրոնյուսին" տված հարցազրույցում Նա ասել է, որ Բայրամովի ներկայությունը ժնևյան բանակցություններում " «ցույց է տալիս, թե ով է բանակցություն ցանկանում»:

Ադրբեջանի ԱԳՆ-ն մերժել է միակողմանի հրադադարի կոչերը ՝ հայտարարելով, որ ամրապնդում է ստատուս-քվոն ՝ հիմնվելով օկուպացիայի վրա:

Դիրքերի ամրապնդում

Հայաստանը՝ իր պատմական հայրենիքը համարվող տարածքից հեռանալու հնարավորությունը բացառում է: «Մեր դիրքորոշումը եղել է և մնում է այնպիսին, որ Լեռնային Ղարաբաղի հարցը չի կարող լուծվել բռնության միջոցով» , - Եվրանյուսին տված հարցազրույցում ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, որը տասնամյակներ շարունակ մեղադրել է Մինսկի խմբին ճգնաժամն անտեսելու մեջ, հինգշաբթի հայտարարել է, որ Անկարան կշարունակի աջակցել «մեր բոլոր(ողջ) ռեսուրսներով՝ մեր ադրբեջանցի եղբայրներին» :

«Ես կրկին կոչ եմ անում միջազգային հանրությանը: . .. քայլեր ձեռնարկել, որպեսզի վերջ դրվի Հայաստանի կողմից ադրբեջանական հողերի բռնազավթմանը» , - հայտարարել է նա Փենիսուլա թերթում :

Հինգշաբթի օրը Ադրբեջանը խորհրդակցությունների համար հետ է կանչել իր դեսպանին Հունաստան, հաղորդել է նրա արտաքին քաղաքական գերատեսչությունը:

«Մենք Հունաստանի արտաքին գործերի նախարարության ուշադրությանն ենք ներկայացրել բաց աղբյուրներից ստացված տեղեկատվությունը `օտար երկրներից, այդ թվում՝ Հունաստանից, Ադրբեջանի օկուպացված տարածքները Հայաստանի քաղաքացիների ժամանման մասին `ռազմական գործողություններին մասնակցելու համար», - ասված է նախարարության հայտարարության մեջ:

Հայաստանը մերժել է այդ մեղադրանքները, և Աթենքը հետ է կանչել Ադրբեջանում իր դեսպանին այն բանից հետո, երբ Ադրբեջանի կառավարությունը «անհիմն և վիրավորական" է անվանել այն պնդումները, թե Հունաստանը հանդուրժողաբար է վերաբերվում իր տարածքում «ահաբեկիչներին»:

Ռուսաստանի դիրքորոշումը

Երևանը գտնվում է նախկին խորհրդային հանրապետությունների ռազմական միությունում ՝ Մոսկվայի գլխավորությամբ, և Ղարաբաղի պատճառով ռազմական գործողությունների ցանկացած էսկալացիա, որը կանցնի Հայաստանին, կարող է ռուսական ինտերվենցիա հրահրել :

Բայց Մոսկվան որևէ էսկալացիայի նկատմամբ հատուկ ախորժակ չի(չունի) ցուցաբերում: Նա հայտարարել է, որ ռազմական գործողությունները շարունակվում են օկուպացված Ղարաբաղում, այլ ոչ թե Հայաստանում:

Թարգմանությունը՝ Վերա Ապիկյան

Նունե Գալոյան

Ղեկավար՝ Նառա Դավթյան